ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հոկտեմբերի 2024թ. թիվ 785-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 785-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. մարտի 15-ի թիվ 272-Ն որոշմամբ հաստատված «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման» օրինակելի ձևի 1-ին և 2-րդ կետերով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2018 թվականի հունիսի 6-ի թիվ 02/41.3/9003-18 հանձնարարականի՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ Գալուստ Նորիկի Մելիքսեթյանին նշանակել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմում ազդարարման համար պատասխանատու անձ:

2. Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Ա.Բաղդասարյանին՝

Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 1-ին կետով նշանակված պատասխանատու անձի տվյալները տեղադրել մարզպետի աշխատակազմի կայքէջում:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 1-ի «ՀՀ Լոռու մարզպետարանում ազդարարման համար պատասխանատու անձ նշանակելու և ՀՀ Լոռու մարզպետի 2018 թվականի հունիսի 22-ի թիվ 158-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 785-Ա որոշումը:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ
2003720081

2024-10-07 16:47:05 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱՋԱՐՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 7
ք.Վանաձոր